պՔննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«30» 12 2023թ. № 4 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի « 15 » 01 2024թ.
N 1-24 նիստում, խորհրդի նախագահ՝ _____ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

# ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՍԿՍՆԱԿ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՄԵՆԹՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնակարգով <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ քոլեջ) իրականացվում է մենթորություն սկսնակ դասախոսին աջակցելու, դասավանդման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու և ուսումնառողներին անհրաժեշտ գիտելիքներով ապահովելու նպատակով, որն էլ նպաստում է մասնագիտական առաջընթացին, փոխըմբռնման հաստատմանը այս գործընթացների շրջանակներում:

**Գործընթացի նպատակներն են՝**

- ներգրավել սկսնակ դասախոսներին քոլեջի կրթական, մշակութային, առօրյա կյանքին,
- աջակցել սկսնակ դասախոսներին հաղթահարել դժվարությունները դասավանդման գործընթացում,
- ձեռք բերել փորձառություն, մանկավարժական հմտություններ, մոտեցումներ:

**Մենթորությունը հաստատվում է՝**

- նոր ընդունված դասախոսների համար, ովքեր չեն ծավալել մանկավարժական գործունեություն,
- այն դասախոսների համար, ովքեր անցել են այլ աշխատանքի, և եթե նրանց կողմից պարտականությունների իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքների ընդլայնում և խորացնում նոր՝ գործնական, կիրառական հմտություններով:

**Գործնթացի ընթացակարգը**

- մենթոր դասախոսի թեկնածությունն առաջադրում է քոլեջի համապատասխան ամբիոնը,
- ամբիոնը որպես մենթոր դասախոս ընտրվում է առավել մասնագիտացած և բարձր որակավորում ունեցող փորձառու դասախոսների, որոնք ունեն հաղորդակցման, մանկավարժական, մեթոդական ունակություններ,

- մենթորությունը հաստատվում է երիտասարդ դասախոսների նկատմամբ նրա աշխատանքի անցնելու պահից,
- մենթորությունը նշանակվում է մենթորի և սկսնակ դասախոսի փոխադարձ համաձայնության դեպքում,
- ամբիոնի մեկ մենթորին կցվում է երեքից ոչ ավելի երիտասարդ մասնագետ՝ կախված մենթորության կազմակերպման տեսակից և ամբիոնում սկսնակ դասախոսների թվից,
- սկսնակ դասախոսների հետ աշխատանքի արդյունքները մենթորը ներկայացնում է ամբիոնի նիստի քննարկմանը՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին: Արդյունքներն ամփոփվում են ամբիոնի անդամների կողմից,
- մենթոր է նշանակվում նաև մոդուլային աշխատանքների պատասխանատուն, ով սկսնակ դասախոսին ծանոթացնում է ուսումնառության նյութերի, պլանների և գնահատման թերթիկների կազմման սկզբունքներին:

**Մենթոր-դասախոսի պարտականությունները**

- հասկանալ սկսնակ դասախոսին բնորոշ կարիքները, լինել պատրաստակամ,
- ցուցաբերել ճիշտ մոտեցում՝ աջակցելու սկսնակ դասախոսին վերհանել և հաղթահարել դժվարությունները,ցուցաբերել առաջնորդություն՝ հիմնված փորձի վրա,
- ստեղծել դրական խորհրդակցական հարաբերություններ և ազատ քննարկման համար նպաստավոր մթնոլորտ: